Արձանագրություն N 2

ՀԾԿՀ-20/9-ԳՀԱՊՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման միջոցով գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18 փետրվարի 2020թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Արթուր Բեգլարյանը, Մեսրոպ Ղարիբյանը, Անուշ Սմբատյանը և քարտուղար՝ Սիլվա Հարությունյանը:

Օրակարգ
Հայտերի բացման, գնահատման և անհամապատասխանությունների շտկման մասին

ՀԾԿՀ-20/9-ԳՀԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումները և գտնվելու վայրը				
	«Սմարթլայն» ՍՊԸ ք.Երևան, Վարդանանց 110	«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ ք.Երևան, Քրիստափորի 2/2	«Օպտշին» ՍՊԸ ք.Երևան, Էրեբունու 26/15	«ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ ք.Երևան, Վարդանանց փողոց ,10 շենք, բն.37	Նախահաշվային գին
	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	
	Գնային առաջարկը /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/				
1	758 333,33	771 875	812 500	824 500	921 900
2	-	-	-	4 500	7 400

19.02.2020թ. հանձնաժողովը քննարկեց և որոշեց.

1. 1-ին չափաբաժնի մասով իրականացնել ներկայացված հայտերի գնահատում որի արդյունքում «Սմարթլայն» ՍՊԸ-ին՝ ընտրված մասնակից ճանաչել, իսկ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ», «Օպտշին» և «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ները գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները

2. 2-րդ չափաբաժնի մասով մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանության հետ կապված կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել մասնակցին շտկումների վերաբերյալ՝ առաջարկելով մինչև նիստի կասեցման ավարտը շտկել հետևյալ անհամապատասխանությունը.

- «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» հավելվածի /Հավելված 1.1/ տեխնիկական բնութագիրը ոչ լիարժեք է՝ բացակայում է էական հանդիսացող այնպիսի պարամետրեր ինչպիսիք են՝ թերթերի քանակը, էջերի սպիտակությունը և խտությունը, գրասենյակային գրքի ձևաչափը՝ հրավերով պահանջվում է A4:

3. Ընտրված մասնակից ճանաչված կազմակերպության հետ հրավերով սահմանված ժամկետում կնքել պայմանագիր:

4. Կասեցման հետ կապված հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2020թ. փետրվարի 20-ին ժամը 15:00-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Լիլիթ Մկրտչյան

անդամներ _____ Ջուլիետա Բաբայան

_____ Արթուր Բեգլարյան

_____ Մեսրոպ Ղարիբյան

_____ Անուշ Սմբատյան

քարտուղար _____ Սիլվա Հարությունյան